

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

_____ N ----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 314 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *n p n շ ու մ է*.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 22-ի «Գազասպառման համակարգի շահագործման անվտանգության մակարդակի բարձրացման և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 314-Ն որոշման 2-րդ կետում «2010» և 4-րդ կետում «2009» թվերը համապատասխանաբար փոխարինել «2012» և «2011» թվերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 22-ի N 314 –Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման

Ի կատարումն ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 22-ի N 314 –Ն որոշման պահանջի, գազասպառման համակարգի շահագործման անվտանգության մակարդակի բարձրացման և այդ համակարգում տեղի ունեցող պատահարների կանխարգելման նպատակով, «ՀայՌուսգազարդ» ՓԲ ընկերությունը, համաձայն հաստատված ժամանակացույցի, հանրապետության ողջ տարածքում, ներսնային և կենցաղային գազասպառման համակարգերում, տեղադրում է այրվող գազերի ազդանշանային սարքեր և դրանց միացված վթարային անջատիչ կափույրներ:

Այս գործընթացի իրականացումը սկսվել է 2008 թվականի դեկտեմբերից և մինչև ընթացիկ տարվա վերջը գազասպառման համակարգի մոտ 270 հազար բաժանորդների մոտ կտեղադրվեն նշված ավտոմատ համակարգերը՝ առաջնությունը տալով բազմաբնակարան շենքերի բաժանորդներին:

Քանի որ մինչև 2010 թվականի հունվարի 1-ը հանրապետության ողջ տարածքում կենցաղային գազասպառողների թիվը կհասնի մոտ 600 հազարի և ավտոմատ համակարգեր չտեղադրված բաժանորդների գերակշռող մասը կկազմեն առանձնատները, ուստի այդ համակարգերի տեղադրման գործընթացն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է որոշմամբ ամրագրված տեղադրման ժամկետները փոփոխել:

ՀՀ կառավարության սույն որոշման նախագծով նշված գործընթացի վերջնաժամկետ է նախատեսվում 2012 թվականի հունվարի 1-ը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՄԵՆ ՍՈՎՍԻՍՅԱՆ